ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ջարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-603-23.09.2014-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

Օրենքի նախագծով նախատեսված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի համար սահմանել պարտականություն՝ յուրաքանչյուր նստաշրջանի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում հանդես գալ նստաշրջանի ընթացքում իր կատարած գործունեության վերաբերյալ գրավոր հաշվետվությամբ: Հաշվետվությունը ներառում է տեղեկատվություն նրա կողմից հեղինակած օրենսդրական նախաձեռնությունների, գրավոր ու բանավոր հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարու-

թյանը դիմելու, մշտական հանձնաժողովների և այն հանձնաժողովների, որոնց անդամ է հանդիսանում, նիստերին մասնակցելու, դրանց ընթացքում ունեցած ելույթների, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարների ու պաշտոնատար անձանց հետ ունեցած հանդիպումների, քաղաքացիներից ստացված նամակների և դրանց պատասխանների, գործուղումների, քաղաքացիների ընդունելությունների, սույն օրենքի 35-րդ հոդվածով սահմանված հայտարարությունների ժամին հնչեցրած հայտարարությունների մասին:

Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներկայացվող հաշվետվության մեջ նախատեսվում են նաև պատգամավորի գործունեությանը վերաբերող այնպիսի տեղեկություններ, որոնք ներկայացնելը նրա պարտականությունը չէ: Մասնավորապես, օրենքի նախագծով նախատեսվում է, որ պատգամավորը պետք է հաշվետու լինի Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ գրավոր և բանավոր հարցերով դիմելու, գործուղումների և քաղաքացիների ընդունելությունների համար: Մինչդեռ, ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, այնպես էլ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանը դիմելը յուրաքանչյուր պատգամավորի իրավունքը և ոչ թե պարտականությունն է: Նույնը վերաբերում է նաև քաղաքացիների հետ հանդիպումների և ընդունելությունների կազմակերպմանը: Այդ առումով պարզ չէ, թե ինչու պետք է պատգամավորն իր՝ օրենքով նախատեսված իրավունքների իրականացման վերաբերյալ հաշվետվություն ներկայացնի:

Հարկ է նշել նաև, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով հստակ սահմանված են պատգամավորի պարտականությունները, մասնավորապես՝ պատգամավորը պարտավոր է մասնակցել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերին, ինչպես նաև այն հանձնաժողովների,

ենթահանձնաժողովների ու աշխատանքային խմբերի նիստերին, որոնց կազմում նա ընդգրկված է, ընդգրկվել մշտական հանձնաժողովի կազմում, պահպանել էթիկայի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նստավայրի տարածքում ու շենքում գործող անվտանգության կանոնները, ուսումնասիրել քաղաքացիներից ստացված առաջարկությունները և պատասխանել դիմումներին և այլն: Այդ առումով նշված հաշվետվությունը չի կարող դիտարկվել որպես պարտականություն: Բացի դրանից՝ «հաշվետվություն» հասկացությունը ներառում է նաև գնահատման տարր, և, ըստ համապատասխան գնահատականի, պետք է առաջացնի նաև իրավական հետևանքներ: Մինչդեռ ներկայացված օրենքի նախագծից պարզ չէ, թե պատգամավորի կողմից ում է ներկայացվելու նշված հաշվետվությունը, և ինչ իրավական հետևանքներ են առաջանալու վերջինիս համար՝ այն չներկայացնելու կամ սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացնելու դեպքում: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, որոնց համաձայն նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:

Միաժամանակ, համաձայն օրենքի նախագծի հետ ներկայացված հիմնավորման, օրենքի նախագծի ընդունումը նպատակ է հետապնդում օրենսդիր մարմնի աշխատանքը դարձնելու առավել թափանցիկ և հաշվետու՝ ընտրողների առջև պատգամավորի հաշվետու լինելու ինստիտուտի ներդրման, ինչպես նաև պատգամավորների միջև մրցակցությունը խթանելու միջոցով: Այդ առումով նշենք, որ ներկայացված օրենսդրական նախաձեռնությունների թիվը պատգամավորի ակտիվության որոշման բավարար ցուցանիշ չէ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքի նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն
«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27[1] և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաոլորտների բնութագրիչները հաստատելու մասին» N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումկատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման պարագայում Ազգային Ժողովի պատգամավորը պարտավոր է յուրաքանչյուր նստաշրջանի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում գրավոր հաշվետու լինել իր կատարած գործունեության վերաբերյալ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է ԱԺ յուրաքանչյուր նստաշրջանից հետո պատգամավորի կողմից նստաշրջանի ընթացքում իր կատարած գործունեության վերաբերյալ գրավոր հաշվետվության սահանմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

Եզրակացություն
«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-603-23.09.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետում «հայտարարությամբ» բառից հետո վերջակետը փոխարինել միջակետով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր ե) կետով հետեւյալ բովանդակությամբ.

«ե) յուրաքանչյուր նստաշրջանի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում հանդես գալ գրավոր հաշվետվությամբ նստաշրջանի ընթացքում իր կատարած գործունեության վերաբերյալ: Հաշվետվությունը ներառում է տեղեկատվություն նստաշրջանի ընթացքում իր հեղինակած օրենսդրական նախաձեռնությունների, Հայաստանի Հանրապետության կառավարությանը գրավոր եւ բանավոր հարցերով դիմելու, լիագումար նիստում եւ այն մշտական հանձնաժողովի կամ հանձնաժողովների, որի անդամ է հանդիսանում, նիստերում օրինագծերի քննարկման ժամանակ ունեցած ելույթների, խորհրդարանական լսումներում ունեցած ելույթների, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարների ու պաշտոնատար անձանց հետ ունեցած հանդիպումների, քաղաքացիներից ստացված նամակների եւ դրանց պատասխանների, քաղաքացիների ընդունելությունների, գործուղումների, սույն օրենքի 35-րդ հոդվածով սահմանված հայտարարությունների ժամին հնչեցրած հայտարարությունների վերաբերյալ: Հաշվետվությունը հրապարակվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույն օրենքում առաջարկվող լրացումը նպատակ ունի առավել բաց, թափանցիկ եւ հաշվետվողական դարձնելու Հայաստանի Հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմնի աշխատանքները: Լինելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ընտրված պաշտոնյա՝ իր գործունեության հինգ տարիների ընթացքում որեւէ ձեւով պատգամավորը հաշվետու չի լինում իր ընտրողների առջեւ: Հաշվետու լինելու ինստիտուտի ներդրումը հնարավորություն կտա շահագրգռել պատգամավորին աշխատել, խթանել մրցակցությունը պատգամավորների միջեւ: Նման մոտեցումը հնարավորություն կստեղծի, որպեսզի պատգամավորը շահագրգիռ լինի ցուցաբերելու ակտիվություն, որովհետեւ իր պատգամավորական գործունեության ընթացքում ցուցաբերած ակտիվությունից է մեծապես կախված լինելու նրա վերընտրվելու հավանականությունը: Սա կարող է նպաստել, որպեսզի Հայաստանի Ազգային ժողովը համալրվի առավել կարող, նորարար գաղափարներով հարուստ, թարմ հայացքներ ունեցող պատգամավորներով, այդպիսով խորհրդարանը դարձնելով առավել պրոֆեսիոնալ եւ արդյունավետ գործող պետական ինստիտուտ: